

**021502.01.6 «ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Ուսուցումն իրականացվում է միայն բակալավրիատի կրթական ծրագրով՝ 4 ուսումնական տարի: Շրջանավարտն ստանում է արվեստի բակալավրի որակավորում:

Դիմորդը մասնագիտական բանավոր քննություն է հանձնում «Մասնագիտական գործիք և դիրիժորություն» (ՄԳԴ) առարկայից: Դիմորդը պետք է տիրապետի նշված գործիքներից որևէ մեկին (ֆլեյտա, կլառնետ, գալարափող, շեփոր, տրոմբոն, հարվածային գործիքներ, բարիտոն, տենոր, սուրբա, ալտ, սաքսոֆոն, իոնիկա, կիթառ, ջվի, դուդուկ, քանոն, թառ, ուդ, քամանչա, բամբիռ, դափ, դեղ):

Դիմորդը պետք է կատարի՝

- Մինչև հինգ նշան ունեցող մաժոր, մինոր գամմաներ
- Մեկ էտյուդ
- Մեծ կտավի երաժշտական ստեղծագործության, կոնցերտի որևէ մաս կամ տարբեր բնույթի երկու պիես

• Դիրիժորական սխեմաների և էլեմենտների ցուցադրում՝ 2/4, 3/4, 4/4, 6/4 չափերը (պիանո, ֆորտե, լեգատո, ստակատո, ֆերմատո):

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Առավելությունը տրվում է դիմորդի կողմից ներկայացրած ծրագրի գործիքային կատարմանը:

1-7 միավոր

- Ծրագիրը չի համապատասխանում ընդունելության պահանջներին:
- Ծրագիրը համապատասխանում է պահանջներին, բայց կատարվում է բազմաթիվ թերություններով:

• Բացակայում են դիրիժորական տարրական գիտելիքները:

8 միավոր

• Ծրագիրը և կատարումը համապատասխանում է ընդունելության քննության նվազագույն պահանջներին:

• 2/4 և 3/4 չափերի դիրիժորական սխեմաների ցուցադրում:

9-10 միավոր

• Ծրագիրը միջին բարդության է, կատարվում է որոշ սխալներով:

• 2/4, 3/4, 4/4 չափերի դիրիժորական սխեմաների բավարար ցուցադրում:

11-12 միավոր

- Ծրագիրը միջին բարդության է, կատարվում է որոշակի թերություններով:
- 2/4, 3/4, 4/4 չափերի դիրիժորական սխեմաների և ձայնի ուժգնության (ֆորտե,

պիանո) ցուցադրում:

13-14 միավոր

- Ծրագիրը միջին բարդության է, կատարվում է տեմպային և դինամիկ թերություններով:

• 2/4, 3/4, 4/4 չափերի դիրիժորական սխեմաների, ձայնի ուժգնության (ֆորտե, պիանո) և շտրիխների (լեգատո, ստակատո) ցուցադրում:

15-17 միավոր

- Ծրագիրը համապատասխան բարդության է, կատարման մակարդակը՝ լավ:

• 2/4, 3/4, 4/4, 6/4 չափերի դիրիժորական սխեմաների, ձայնի ուժգնության (ֆորտե, պիանո) և շտրիխների (լեգատո, ստակատո, ֆերմատո) ցուցադրում:

18-20 միավոր

- Ծրագիրը բարդ է, կատարումը՝ գերազանց:

• Ղեկավարում է երաժշտական ստեղծագործությունը դաշնամուրի նվագակցությամբ: